ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 381-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի «Արդյունաբերական ջերմոցային համալիր» ներդրումային ծրագրին հավանություն տալու, Էդուարդ Օհանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրում ծրագրի իրականացման նպատակով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 195-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետում «51.41468 հա» բառերը փոխարինել «15.786651 հա» բառերով.

2) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշման 4-րդ կետում «5 տարվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը» բառերով.

4) որոշման N 2 հավելվածի «Կողմերի պարտավորությունները» տողի երկրորդ սյունակի՝

ա. 2-րդ կետի 2-րդ ենթակետում «5 (հինգ) տարվա» և «5 (հինգ) տարվան» բառերը փոխարինել «4 (չորս) տարվա» և «4 (չորս) տարվան» բառերով, իսկ «կատարման ժամկետը սահմանվելու է մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը:» բառերը փոխարինել «կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը:» բառերով,

բ. 2-րդ կետի 3-րդ ենթակետում «առնվազն 48.000.000 (քառասունութ միլիոն) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով» բառերը փոխարինել «առնվազն 15.000.000 (տասնհինգ միլիոն) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով» բառերով,

գ. 2-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8) Ծրագրի իրականացման 1-ին տարում նախատեսվում է իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքների և միջոցառումների ծավալի 5%-ը, 2-րդ տարում՝ 7%-ը, 3-րդ տարում՝ 38%-ը, 4-րդ տարում՝ մնացած 50%-ը:».

5) որոշման N 2 հավելվածի «Կողմերի պատասխանատվությունը» տողի երկրորդ սյունակը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություններով՝

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ————ի N——Ա որոշմամբ կատարված փոփոխությունները և լրացումները չեն հանդիսանում գնորդի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանք և չեն ենթադրում որևէ տույժի կամ տուգանքի կիրառում:

Գնորդը «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ համատեղ կազմում և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում ամփոփիչ հաշվետվություն մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը:».

6) որոշման «Արդյունաբերական ջերմոցային համալիր» ներդրումային ծրագիր Էդուարդ Օհանյանի և «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իրականացվող» վերնագրով N 2 հավելվածի վավերապայմաններում «Հավելված N 2» բառերը փոխարինել «Հավելված N 3» բառերով.

7) որոշումը լրացնել N 4 հավելվածով՝ համաձայն N 3 հավելվածի.

8) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով՝

«5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ————ի N —— Ա որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, բայց ոչ ուշ, քան 3 (երեք) ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարը և «Գրին Սոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կնքում են նվիրատվության պայմանագիր՝ սույն որոշման N 3 հավելվածով նախատեսված հողատարածքները Սևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցելու նպատակով:».

9) որոշման «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԷԴՈՒԱՐԴ ՕՀԱՆՅԱՆԻ ԵՎ «ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ» վերնագրով N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում որոշման N 3 հավելվածով սահմանված հողամասերի նկատմամբ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումն իրականացնելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ